

ՀՀ Տեղեկատվական համակարգին ցնցումներ չեն ստասում

Ուղղակի Մուտայան

Ընթացիկ՝ 20-րդ դարը հայ-սնի է որդես տեղեկատվության դար: Տեղեկատվական արդյունաբերությունն ամենաբուռն զարգացողն է եւ ավելի ու ավելի կարեւոր է դառնում հասարակության կյանքում:

Տեղեկատվական համակարգում հայտնի «2000 թվականի հիմնախնդիրը» 90-ականների անստասելի հայտնությունն է, քանի որ այդ համակարգերի ստեղծման ժամանակ շատ մեծ էր մեքենայական հիշողության գինը: Սարբերում եւ լրատվության հենքերում, օրինակ՝ ֆինանսական համակարգերում, իմաստ ունեւ տեղի սնտեսման համար սարբերվող հիշել վերջին երկու կարգերով՝ 55, 67 եւ այլն: Այս դեղմում 99-ին հաջորդում է 00-ն:

«2000 թվականի հիմնախնդիրը» կարող է լուրջ խնդիր հարուցել հասկադես քանկային, հեռահաղորդակցության, էներգետիկայի, օդային կադի եւ այլ բնագավառներում: Դեռեւս 1998թ. հուլիսի 2-ին ՄԱԿ-ի 52/233-րդ որոշմամբ հիմնվեց Միջազգային համագործակցության կենտրոնը: Հայաստանն այս կառույցի հետ սկսել է համագործակցել 1998թ. նոյեմբերից՝ 2000թ. հանձնաժողովի

վի ստեղծման դահից, եւ օգտվում է ծրագրման փուլի շնորհից: Ինչ խոսք, հիմնախնդիրը տեխնիկականից զատ կազմակերպական բնույթի է եւ բաղրատված է փուլերի՝ տեղեկատվական համակարգերի հաշվառում, ռիսկի սիրույթների բացահայտում եւ գնահատում, համակարգերի վերակառուցման նախագծում եւ իրականացում, տեսավորում եւ հաստատում, արտակարգ իրավիճակների ծրագրավորում:

Արդյո՞ք Հայաստանը դասրատ է դիմակայելու «2000 թվականի հիմնախնդրին», երբ ամբողջ աշխարհում, էլեկտրոնային եւ ծրագրային տեղեկատվական համակարգեր կիրառող կազմակերպություններն ստիղված են լուրջ միջոցներ ձեռնարկել:

Խնդրի առանձնահատկությունը այն է, որ հնարավոր են մեծ թվով համակարգերի միաժամանակյա խափանումներ: Ինչդես եւ նեւցինք, Հայաստանում «2000 թ. հիմնախնդրին» առնչվող աշխատանքները ծավալվել են 1998 թ. նոյեմբերից. ստեղծվել է ՀՀ կառավարությանն առընթեր հանձնաժողով, որի շնորհիվ նախարարությունների, գերատեսչությունների ուժերով երկրում ստեղծվել է աշխատանքային խմբերի ցանց: Ադահովվել է խնդրի

տեխնիկական, մեթոդական եւ կազմակերպական լուծումը: Կարճ ժամկետներում իրականացվել են Հայաստանի տեղեկատվական համակարգերի նախադեղը չունեցող լայնածավալ հաշվառում, տեսավորում եւ ռիսկի գնահատում: Արդյունքների ամփոփումը ցույց է սվել, որ առավելագույն վստանգի հնարավոր սիրույթներն ընդգրկում են ֆինանսական, էներգետիկական, հեռահաղորդակցության, դեսական կառու-

«2000 թվականի հիմնախնդիրը» կարող է լուրջ խնդիր հարուցել հասկադես քանկային, հեռահաղորդակցության, էներգետիկայի, օդային կադի եւ այլ բնագավառներում:

վարման եւ օդագնացության ոլորտները: Պեսական հատվածի նախարարատեսման համար անհրաժեշտ է 4,5 մլն ԱՄՆ դոլար:

Դեկտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ-ում հրավիրվեց հիշյալ հանձնաժողովի նիստ, որին ներկա էին հանձնաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ դրեղիդենտ Ֆադեյ Սարգսյանը, դրեղիդենտի տեղակալ Յու. Շուրույանը, ակադեմիկոս Ռ. Աթոյանը,

Դ. Ռոստոյանը (ՀՀ փոստի եւ հեռահաղորդակցության նախարարություն), Գ. Մաչանյանը (ՀՀ ԿԲ), Ա. Մկրչյանը (ՀՀ էներգետիկայի նախարարություն) եւ այլ դասասխանատու դատեռնյաներ:

ՀՀ ԳԱԱ դրեղիդենտ Ֆադեյ Սարգսյանը ներածական ելույթում նեւց, որ եթե ժամանակին միջոցներ չձեռնարկվեն, անկանխատեսելի իրավիճակներ կստեղծվեն: Հանձնաժողովը բավական լուրջ գոր-



էներգետիկական համակարգի համակարգչային ցանցը, ծրագրային միջավայրերը եւ կիրառական համակարգերը հիմնականում նախարարատեսված են դրան:

Ինչ վերաբերում է ՀԱԷԿ-ին, այնտեղ իրականացվել են նդատակային ծրագրեր: Հատատեղեկատվական կարելի է ասել՝ 2000 թ. անցումը չի ազդի ՀԱԷԿ-ի միջուկային եւ ձառագայթային անվսանգությանը:

Փոստի եւ հեռահաղորդակցության համակարգը ներկայացրեց Դ. Ռոստո-

յանը: Նրա դնդմամբ, մոտ 1000-1200 համակարգիչներ վերափոխվել են, այդ թվում՝ արտաին կադի առումով: Համակարգի բոլոր ընկերություններում չնախատեսված երեույթների դեղմում կանխարգելման միջոցներ ձեռք առնելու նդատակով, նախարարությունում ստեղծվել է համատատասախան հանձնաժողով, սահմանվել է հերթադահություն՝ ս. թ. դեկտեմբերի 25-ից մինչեւ 2000 թ. հունվարի 31-ը:

Պարզվում է, խնդրի լուծմանն ամենագործուն դե-

րակատարներից մեկը եղել են ֆինանսների նախարարությունը եւ ԿԲ-ն: Վերջինս վերականգնել է բոլոր սարբերը եւ ծրագրային միջավայրը, ցանցային եւ տեղեկատվական դատեղանվածության կառույցները, սվյալների հենքերը եւ կիրառական ծրագրային համակարգերը:

Այսդիտով, մեր էլեկտրոնային հաշվիչ-տեղեկատվական համակարգը դատատես է դիմավորելու անցող հազարամյակի վերջին տարին: